Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8450

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

# ՎԱՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱՄԱԿԸ

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍՆԵՐԻ ԿԵՆՏԿՈՄՆԵՐԻՆ, ՄԱՐԶԿՈՄՆԵՐԻՆ, ԲՋԻՋՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ЗКП3(47.92)
Հ-22

ՀԿԿ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄ

1931

17.09.2013

Տպ. Ս. Ա. Մյասնիկյանի անվան «Զարյա Վոստոկա»-ի Թուսաթավ. պ. 36

Պատվեր № 596 Գլավլիտ 906 Տիրաժ 10000

ЗКПЗ(47-92)
Z-22
կր.
24 SEP 2006
1 DEC 2009
1006
28504

Հնգամյակի անցած յերկու տարին սոցիալիստական հարձակման տարիներ եյին, սոցիալիստական շինարարության բարձր տեմպերի տարիներ: Կուսակցության և նրա Կենտկոմի լենինյան ճիշտ քաղաքականությունն ապահովեց Խորհրդային Միության սոցիալիստական ինդուստրացման հզոր աճը: Այդ աճն արմատական բեկում առաջ բերեց գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման ուղղությամբ: Կոլխոզների և սովխոզների շինարարության բնագավառում ձեռք բերված խոշորագույն աջողություններով և համատարած կոլլեկտիվացման բազայի վրա կուլակության, իբրև դասակարգի, չարունակվող վերացումով՝ հիմնականում լուծված ե հացահատիկային պրոբլեմը և խոշոր քայլ ե արվել սոցիալիստական անասնաբուծության գործում:

Արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալիստական շինարարության խոշոր աջողությունների հետ միասին տեղի յե ունեցել նաև բանվոր դասակարգի քանակական աճը, հիմնականում վերացված ե գործազրկությունը, բարձրացվել ե աշխատավորների կյանքի նյութական և կուլտուրական մակարդակը, բարձրացել ե բանվորների ռեալ աշխատավարձը: ԽՍՀՄ-ի տնտեսական և կուլտուրական վերելքի գործում վճռական դեր խաղաց բանվոր դասակարգի և կոլխոզնիկների ակտիվության և աշխատանքային վոգևորության աճը:

Կուսակցությունը ձեռք բերեց այդ մեծագույն աջողությունները, վորոնք բնորոշում են ԽՍՀՄ Թևակոխելն սոցիալիզմի ժամանակաշրջանը: Այդ տեղի յե ունեցել շնորհիվ գլխավոր գծի և յերկու ֆրոնտով մղվող անհաշտ պայքարի—ընդդեմ աջ թեքման, իբրև տվյալ ետապում գլխավոր վտանգի, ընդդեմ տրոցկիզմի, հաշտվողականության և յերկերեսանիության:

Այս հանրագումարը փայլուն կերպով հաստատեց պլանի կատարման օբյեկտիվ հնարավորությունները, սոցիալիստական շինարարության տեմպերի իրական լինելը և թույլ տվեց ընդունելու 1931 թվի վճռական տարվա համար ե՛լ ավելի բարձր

ձըր պլաններ, վորոնց կատարումով հնգամյակի յերրորդ տարում ավարտվելու յե ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը:

Խորհրդային Միության խոշորագույն նվաճումները ուժեղացրին Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական հիմքը, ամրացրին պրոլետարիատի դիկտատուրան, հաստատեցին ազգային խաղաղություն և պայմաններ ստեղծեցին Անդրկովկասի սոցիալիստական ինդուստրացման և ժողովրդական տնտեսության տեխնիկական ու սոցիալական վերակազմության տեմպերն արագացնելու համար: *Նավթի ստացումը հնգամյակի յերկրորդ տարում աճեց 19 և կես տոկոսով, գերազանցելով 1913 թվին 40 տոկոսով: Անդրկովկասյան ժողկոմխորհի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1929—30 թվին, հնգամյակի առաջին տարվա համեմատությամբ, աճեց 38 տոկոսով: Անդրկովկասի ամբողջ արդյունաբերության կապիտալ ներդրումներն աճել են 60 տոկոսով, պետական բյուջեն՝ 54 տոկոսով, տեխնիկական մըշակույթների ցանքային տարածությունները՝ 30 տոկոսով, կոլլեկտիվացրած տնտեսությունների տոկոսը 1928—29 թվին 1,4 տոկոսից բարձրացավ մինչև 17,6 տոկոս:*

*Անդրկովկասի կոմմունիստական կազմակերպություններն սկսում են կուսակցական ստորին մարմինների վերընտրությունները, չկատարելով 1930 թվի պլանն ըստ նավթի, բամբակի, թեյի և Անդրկովկասի ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վերաբերյալ: Կուսակցական կազմակերպությունները չեն ապահովել այդ այն պատճառով, վոր նրանք «չեն կարողացել ճիշտ ղեկավարել» (Ստալին) տնտեսությունն այնպես, վոր այդ ռեալ հնարավորությունները կենսագործվեն, չեն կարողացել բոլշևիկորեն պայքարել տեմպերի համար, չեն կարողացել կազմակերպել և գլխավորել մասսաների ակտիվությունը:*

*Անդրկովկասի 1931 թվի ժողովրդական տնտեսության պլանը զգալիորեն գերազանցում է նախորդ տարիների պլաններին:*

15·327·000 ՏՈՆՆ ՆԱՎԹ:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՏՆՏԽՈՐՀԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՃ 66 ՏՈԿՈՍՈՎ:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ 12·000·000 ՏՈՆՆ:

ԲՅՈՒՋԵՅԻ ԱՃ 50 ՏՈԿՈՍՈՎ:

1·506·000 ՀԵԿՏԱՐ ԳԱՐՆԱՆ ՑԱՆՔԵՐ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐ 400·000 ՀԵԿՏԱՐ:

250·000 ՀԵԿՏԱՐ ԲԱՄԲԱԿ:

ԲԱՄԲԱԿԻ ՌԱՅՈՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՈՒՄ 50 ՏՈԿՈՍՈՎ: ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՆԵԼ 20—25 ՏՈԿՈՍԸ:

—ՍՐԱՆՔ ԵՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ 100·000 ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ և ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ և ԱՄԲՈՂՋ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՆԴԵՊ:

*Վորպեսզի այդ ռեալ պլանները կենսագործվեն, պահանջվում է ուժերի մեծ լարվածություն, մեծ կազմակերպվածություն և Անդրկովկասի կուսակցական ամբողջ կազմակերպության միասնական կամքը, հարկավոր է, վոր բոլոր բոլշևիկները գտնվեն իրենց բարձրության վրա, իբրև բանվորների, կոլխոզնիկների, չքավորների և միջակների միլիոնավոր մասսաների ակտիվության և վոգևորության նոր վերելքի կազմակերպիչներ:*

*Հնգամյակի յերրորդ տարվա առաջին ամսվա—հունվարի ցուցանիշներն Անդրկովկասում անբավարար են: Նավթի պլանը կատարվել է միայն 95,8 տոկոսով, նավթի մըշակումը—92,5 տոկոսով, միջոցների մոբիլիզացիան—59,9 տոկոսով, խոշոր անասունների մթերումը—60 տոկոսով: Հացամթերումների տարեկան պլանը մինչև փետրվարի մեկը կատարվել է 88 և կես տոկոսով: Ձմեռային արաթը կատարվել է 25,7 տոկոսով: Գյուղերի, կոլխոզների, սովխոզների և մեքենատրակտորային կայանները թույլ են նախապատրաստված ցանքի համար:*

*Այս ցուցանիշներն ազդարարում են, վոր մի շարք կուսակցական կազմակերպությունների մեջ կա աջ ոպորտունիստական ինքնահոս, չեն կարողանում կազմակերպվել, համախմբել մասսաների ուժերն, ուշադրությունը և յեռանդը ժողովրդական տնտեսության պլանի ամենապատասխանատու խնդիրների համար պայքարելու գործում:*

*Տնտեսական - քաղաքական խնդիրներից վոչ մեկը չի կարող լուծվել «տարերային կերպով», ինքնահոսով: 1931 թվի մարտական առաջադրությունները պահանջում են կուսակցական բոլոր կազմակերպություններից բոլշևիկյան համառություն տեմպերը բարձրացնելու գործում: Նավթի, արդյունաբերության, տրանսպորտի, գարնանացանի, բամբակի, թեյի, կոլլեկտիվացման, հացահատիկների և անասունների մթերումների, դրամական միջոցների մոբիլիզացիայի պլանները լրիվ կատարելու համար մղվող պայքարը,* տնտեսակ. և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում պլանների համար մըղ-

վող պայքարը՝ կուսակցության գըլխավոր գծի համար մղվող պայքարն է:

ԴԱՐՁՆԵԼ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՐԵՍԸ ԴԵՊԻ 1931 ԹՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ—ԱՀԱ ԱՅՍ ՆԸՇԱՆԱԲԱՆԻ ՏԱԿ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԵՆ ՍՏՈՐԻՆ ԿՈՒՍՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

*«Կուսակցությունը դասակարգի առաջավոր դիտակից խավն է, նրա ավանգարդը: Այդ ավանգարդի ուժը տասը, հարյուր անգամ ավելի մեծ է, քան թե նրա թվաքանակը: Հնարավո՞ր է այդ: Կարո՞ղ է արդյոք հարյուրի ուժը գերազանցել հազարի ուժին: Կարող է և գերազանցում է,* յերբ հարյուրը կազմակերպված է: *Կազմակերպվածությունը տասնապատկում է ուժը: Առաջավոր ջոկատի գիտակցությունը արտահայտվում է, ի միջի այլոց, նրանով, վոր նա գիտե կազմակերպվել: Իսկ կազմակերպվելով՝ նա ըստանում է ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՄՔ, և առաջավոր հազարի, հարյուր հազարի, միլիոնի այդ միասնական կամքը ԴԱՌՆՈՒՄ Է դասակարգի կամք» (Լենին):*

*Կուսակցական կազմակերպությունները վերընտրությունների ընթացքում պետք է առաջ բերեն իրենց ամեն մի օղակի մեջ այնպիսի մարտունակություն, կազմակերպվածություն և կարգապահություն, վորպեսզի անտեսական ֆրոնտի ամեն մի առանձին ասպարեզում ապահովեն ամեն մի բջիջի, ամեն մի որգանի, բոլոր կոմմունիստների և ամբողջ մասսայի նախապատրաստումը 1931 թվի ժողովրդական տընտեսության պլանը լրիվին կատարելու համար:*

*Հնգամյակի յերրորդ տարվա խընդիրների լուծման ճանապարհին Անդրկովկասի կուսկազմակերպությունների առաջ կան դեռ ևս մեծ դժվարություններ, վորոնք իրենց հիմքում ունեն մեր դասակարգային թշնամու դիմադրությունը: Հետագա ծավալուն հարձակման կազմակերպումը պահանջում է ամենից առաջ հենց կուսակցության մոբիլիզացիան:*

*Կուսակցությունը քայքայեց հակահեղափոխական տրոցկիզմին, լիովին մերկացրեց կուսակցության մեջ կուլակության գործակալությանը—աջ ոպորտունիզմը, ջախջախեց Սիրցով-Լոմինաձեյի «ձախ» աջ պլատֆորմը:* ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԸՆԴԻՐՆ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՆՈՂՈՔ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ԱՋ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ, ԻԲՐԵՎ ՏՎՅԱԼ ԵՏԱՊՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ՎՏԱՆԳԻ ԴԵՄ, ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՐՈՑԿԻԶՄԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ



և ՀԱՇՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ՎՈՐՈՆՔ ԽԱՓԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ:

*Ներկայումս ջախջախված աջ ոպորտունիստները և «ձախ» կիսատրոցկիստները չեն հրաժարվում այլեւս ցույց տալու իրենց իսկական դեմքը, խոսքով հայտարարում են, վոր համաձայն են կուսակցության գլխավոր գծին, իսկ գործով քայքայիչ աշխատանք են տանում լենինյան գծի դեմ:* ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ Է ՍՐԵԼ ՊԱՅՔԱՐՆ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ, ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՉԱԼՐՋՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՓՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ և ԻՐԵՆՑ ՇԱՐՔԵՐԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՈՂՈՔԱԲԱՐ ՄԵՐԿԱՑՆԵԼՈՎ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ:

*Կուսակցության շարքերում դասակարգային պայքարի սրվածության պատճառով ակտիվացող ազգային թեքումները՝ ռուսական մեծապետականությունը և տեղական շովինիզմը (վրացական, թուրքական, հայկական), վորը թուլացնում է Անդրկովկասի ժողովրդների միասնականությունը և ձեռնտու յե ինտերվենցիային,*—դրա հետևանքով կուսակցական կազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց պայքարը ռուսական մեծապետական շովինիզմի և տեղական շովինիզմի դեմ, *վոչ մի դեպքում թույլ չտալով վոխադրել ֆեդերալիզմի սկզբունքները կուսկազմակերպությունների աշխատանքների մեջ:*

*Կուսակցական ստորին մարմինների վերընտրությունների ժամանակ պետք է դրված լինեն իրենց ամբողջ բարձրությամբ կուլտուրական հեղափոխության և ազգային կուլտուրական շինարարության պրոբլեմները:* ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ՝

ԼԵՆԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ, *վերացնելով ազգային անհավասարության տարրերը, զարգացնելով Անդրկովկասի ժողովուրդների՝ ձևով ազգային և բովանդակությամբ պրոլետարական կուլտուրաները, առաջ բերելով ազգային պրոլետարական կադրեր:*

*Անցկացնել ընդհանուր սկզբնական պարտադիր ուսուցումը և անգրագիտության վերացումը: Վորակապես բարելավել ստորին մամուլը և բարձրացնել նրա դերն սոցիալիստական հարձակման գործում, մասսաներին համախմբելու համար:*

*Կուսակցական կազմակերպությունների կարևորագույն խնդիրն է մեծացնել կուսակցության շարքերը բանվոր դասակարգի աճող լա-*

չոր ռեզերվների հաշվին: Գլխավորելով բանվորական մասսաների ակտիվությունը բարձրացնելով սոցմրցակցությունը, հարվածայնությունը, աշխատանքային կարգապահությունը, արտադրության ռացիոնալացումը, բարելավելով բանվորական ակտիվի քաղաքական դաստիարակությունը, կուս կազմակերպությունները պետք ե զգալիորեն բարձրացնեն կուսակցության աճման տեմպերը բանվորների առաջավոր մասի հաշվին: Այդ աշխատանքում ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Ե ՆՎԻՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԸ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԳՈՐԾԻՆ: Գյուղում ամուր կազմակերպությունների ստեղծումը պահանջում ե ուժեղացնել առաջավոր բատրակների, կոլխոզնիկների և չքավորների, ակտիվ կոմյերիտների, գեղջկուհիների, բատրակուհիների, կոլխոզների աշխատավորուհիների և չքավորուհիների լավագույն մասի ներգրավումը կուսակցության շարքերը:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ԴԱՌՆԱ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԸՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՈՐԱԿՅԱԼ ԿԱԴՐԵՐ ԱՌԱՋ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸ, ՄԱՆԱՎԱՆԴ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԴՐԵՐԸ, վորոնք կանգնած են լինելու սոցիալիստական շինարարության ժամանակակից պահանջների բարձրության վրա:

1931 թվի ժողովրդական տնտեսության պլանը կատարելու համար ԿՈՒՍ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԱՆՄԻՋԱՊԵՍ ՄՈՏԵՆԱՆ ՍՈՑՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՍՊԱՐԵԶՆԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ:

Բոլշևիկները պետք ե տիրապետեն գործարանների, սովխոզների, կոլխոզների և մեքենայատրակտորային կայանների տեխնիկային, տնտեսությանը և ֆինանսներին: Բոլշևիկը վոչ միայն պետք ե ընդունի կուսակցության գլխավոր գիծը, այլ և ակտիվ պայքար մղի այդ գիծը գործով անցկացնելու համար: ԲՈԼՇԵՎԻԿԸ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԵՏ ԴԱՌՆԱ ԱՅՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ, ԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ, ՎՈՐ ՆՐԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ: Բոլշևիկը պետք ե խորասուզվի ամեն մի կոնկրետ գործի մեջ: Դա կերաշխավորի, վոր կոմմունիստների դերն արտադրության և գյուղատնտեսության մեջ, խորհրդային ու կոոպերատիվային ապարատում և Բուհերում չի սահմանափակվի միայն ընդհանուր ղեկավարությամբ, յերկար շրջաբերականներ և հրահանգներ գրելով, չնկատելով միևնույն ժամանակ ոտար տարրերի և վնասարարների գործերը, վորոնք վիժեցնում են կուսակցության կարևորագույն դիրեկտիվները: Սա յերաշխավորում ե, վոր արտադրության մեջ և տրանսպորտում անց ե կացվելու միավարություն:

Արդյունաբերության զարգացման տեմպերն արագացնելու, գյուղատնտեսության կոլլեկտիվացման համար, բյուրոկրատիզմի, դասակարգային թշնամիների և վնասարարների դեմ պայքարելու համար, կատարվող բանվորական մասսաների ակտիվության մոբիլիզացիան պահանջում ե, վոր կուսակցությունը լայն մասսաների հետ կապող բոլոր շարժաբեր փոկերն աշխատեն մարտական ձևով: Հարկավոր ե «կազմակերպել պրոֆմիությունների, կոոպերատիվների խորհրդային և մյուս մասսայական կազմակերպությունների աշխատանքի վերակառուցումը ռեկոնստրուկտիվ ժամանակաշրջանի կարիքների համեմատ, հարկավոր ե ստեղծել նրանց մեջ ակտիվ և հեղափոխական աշխատավորների միջուկ, մեկուսացնելով ոպորտունիստական, տրեդյունիոնիստական, բյուրոկրատական տարրերը, վտարելով այնտեղից անհարազատ և այլասերված տարրերը, առաջ քաշելով ներքևից նոր աշխատավորների» (Ստալին):

Կուսակցական կազմակերպությունները պետք ե բացատրեն Համկոմկուսի Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումները խորհուրդների և սպառկոոպի աշխատանքի վերակազմության մասին, և ՀԱՄԿԽ պլենումի վորոշումները պրոֆկազմակերպությունների վերակազմության մասին: Այս վորոշումները պետք ե հասցնել ամեն մի անկուսակցական բանվորի, կոլխոզնիկի, չքավորի և միջակի: Այդ միջոցով կապահովվի դիրեկտիվների չուտ իրագործումը:

Անհրաժեշտ ե բարձրացնել խորհուրդների դերը կուսակցության գլխավոր գիծը պրակտիկայում անցկացնելու գործում: Խորհուրդները պետք ե իսկապես ղեկավարեն տնտեսությունը, գործնականապես գլխավորեն սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության, կոլխոզային շինարարության, բանվորական մատակարարման և աշխատավորների կենցաղային և կուլտուրական կարիքների սպասարկման հարցերով: Հենվելով մասսայական խորհրդային ակտիվի և ամենից առաջ արտադրության հարվածայինների վրա, իսկ գյուղում կոլխոզնիկների և չքավորության վրա, խորհուրդները պետք ե կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ամրացնեն իրենց կապը մասսաների հետ և սոցիալիզմի ակտիվ կառուցողների շարքերը

ներգրավեն բանվորներին, կոլխոզնիկներին, անհատական չքավորներին ու միջակներին, մանավանդ բանվորուհիներին, գեղջկուհիներին և յերիտասարդության նոր մասսաներին։

ՎՈՐՊԵՍԶԻ ԻՐԱԳՈՐԾԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՎՃՌԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՄՂԵՆ ԱՋ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԴԵՄ, ՎՈՐԸ ՄԻՆՉԵՎ ԱՅԺՄ ՀԱՃԱԽ ՏԵՂԻ ՅԵ ՈՒՆԵՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ, ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԾԱՎԱԼԵՆ ՀԵՏԱԳԱ ՊԱՅՔԱՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՐԱՏԻ ՄԵՋ ՅԵՂԱԾ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄԻ ԴԵՄ։

*Պրոֆմիությունների փոքրացման չուտափույթ գործադրությունը պետք ե մոտեցնի նրան արդֆինպլյանի համար մղվող պայքարին ավելի կոնկրետ մասնակցություն տալուն, բանվորական մասսաների կուլտ-կենցաղային կարիքները ավելի լավ սպասարկելուն։ Պրոֆկազմակերպությունները արտադրության մեջ պետք ե մոբիլիզացիայի յենթարկեն բանվոր դասակարգի կամքն ու յեռանդը հնգամյակի յերրորդ տարվա ծրագրերը կատարելու և գերակատարելու համար։* ՎՈՐՊԵՍԶԻ ԻՐԱԳՈՐԾՎԻ ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՎՃՌԱԿԱՆԱՊԵՍ ՎՏԱՐԵԼ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՏՐԵԴՅՈՒՆԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻՆ ՅԵՎ ԾԱՎԱԼԵԼ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ։

*Սպառկոոպի աշխատանքի վերակազմությունը սերտ կապված ե այժմ արտադրության, հարվածային շարժման և ռեալ աշխատավարձի բարձրացման հետ։ Սպառկոոպը պետք ե առաջին հերթին ապահովի սոցշինարարության բոլոր բնագավառները և պետք ե մատակարարման գործը կապի արտադրական պլյանների կատարման, աշխատանքի արտադրության բարձրացման, բանվորական ուժի հոսունության դեմ մղվող պայքարի և աշխատանքի սոցիալիստական ձևերի խրախուսման հետ։*

*Գյուղում անհրաժեշտ ե արդյունաբերական ապրանքներով ավելի լավ մատակարարել կոլխոզնիկ., մատակարարման սիստեմը կապելով արտադրական պլյանների և մթերումների աջող կատարման հետ։*

*Կուսկազմակերպությունների ուշադրության կենտրոնում պետք ե լինի փակ բաշխիչների, հասարակական ճաշարանների աշխատանքի բարելավումը, սպառկոոպի ցանցի արմատական բարելավումը գյուղում։*

ՎՈՐՊԵՍԶԻ ԻՐԱԳՈՐԾՎԵՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹ. ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՎՃՌԱԿԱՆԱՊԵՍ ԶՏԵԼ ՍՊԱՌԿՈՈՊԻ ԱՊԱՐԱՏԸ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻՑ, ԴԱՇՆԱԿՆԵՐԻՑ, ՄՈՒՍԱՎԱԹԻՍՏՆԵՐԻՑ ՅԵՎ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻՑ ՅԵՎ ՄՈՏԵՑՆԵԼ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ։

*Կուսակցության ստորին մարմինների վերընտրությունները պետք ե հանդիսանան այն բանի գլխավոր ստուգումը, թե վո՞րքան կուսկազմակերպության ամեն մի օղակ իր ամենօրյա գործնական աշխատանքում մոբիլիզացիայի յե յենթարկել մասսաներին՝ սոցշինարարության պլանները կատարելու և գերակատարելու համար։ Մեծագույն չափով ծավալելով բոլշևիկյան ինքնաքննադատությունը և քննադատությունը, անհրաժեշտ ե արմատախիլ անել այն փորձերը, վորոնք ինքնաքննադատության պատրվակի տակ ցուցաբերում են ոպորտունիստական հայացքներ, և վճռական պայքար մղել ամեն մի քննադատական նկատողությունը «թեքում» համարելու դեմ։* ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԱՊԱՀՈՎԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵԾ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ, ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԱՌԱՋ ՔԱՇԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ՈՂԱԿՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԼԵՆԻՆՅԱՆՆԵՐԻ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ, ԲԱՏՐԱԿՆԵՐԻ, ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ ՉՔԱՎՈՐՆԵՐԻ։

*Կուսակցական կազմակերպությունների աշխատանքը բնորոշող հիմնական մոմենտներից մեկը պետք ե հանդիսանա կոմյերիտմիության աշխատանքի հանդեպ կուսկազմակերպությունների ունեցած ուշադրության աստիճանը և ղեկավարության վորակը։ Ստորին կուսմարմիններում անհրաժեշտ ե բարձրացնել պատասխանատվության գիտակցությունը կոմյերիտմիության հանդեպ։*

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ Ե ԱՄՐԱՑՆԵԼ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՆՐԱ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ, ԸՆԴԵՄ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ։ *Համ. ԼԿՅԵՄ 9-րդ համագումարի վորոշումների ամբողջական կենսագործումը դառնալու յե կուսակցության բոլոր կազմակերպությունների գործը։*

*Կոմյերիտմիությունն, իբրև կուսակցության առաջին և լավագույն ոգնականը, պետք ե մասնակցի տնտեսական շինարարությանը, բարձրացնի իր դերը տնտեսական-քաղա*

քական կամպանիաներում, եր ամեն մի քայլը, վոր կատարում ե արտադրության մեջ, գյուղում, խորհրդային ապարատում և ԲՈՒՀ-ում, յենթարկե կուսակցության սկզբունքային դիրքավորումներին: Անհրաժեշտ ե, վոր կոմյերիտմիությունը տիրապետի արտադրության գործին և գյուղի նոր տեխնիկային: Պետք ե ապահովել բոլոր կոմյերիտների մասնակցությունը սոցմրցակցությանը և հարվածայնությանը, պետք ե ուժեղացնել կոմյերիտմիության մասնակցությունը պրոֆմիությունների աշխատանքին և խորհրդային ապարատի աշխատանքն ավելի լավ կազմակերպելու գործին: Կոլեկտիվացման համար մղվող պայքարի ֆրոնտը պետք ե դառնա կոմյերիտմիության աշխատանքի պատասխանատու ասպարեզներից մեկը: Դրա համար հարկավոր ե վորակապես բարելավել կոմյերիտմիությունը գյուղում: Մոբիլիզացիայի յենթարկելով բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսաները 1931 թվի մարտական առաջադրությունները կատարելու համար, կոմյերիտմիությունը պետք ե ներգրավի իր շարքերը գյուղի բանվոր յերիտասարդության, կոլխոզային և չքավոր յերիտասարդության ու լավագույն միջակ յերիտասարդներին: Կոմյերիտմիության խնդիրն ե ընդարձակել և ամրացնել շեֆությունը Կարմիր բանակի զորամասերի հանդեպ: Կոմյերիտմիությանը ղեկավարելու գործում կուսկազմակերպությունների կարևոր խնդիրն ե ուժեղացնել միության մեջ միջազգային դաստիարակությունը, ամրացնելով Անդրկովկասի բոլոր ժողովուրդների կոմյերիտների փոխադարձ կապը: Պատանի պիոներների շարժումը ղեկավարելու համար, հարկավոր ե, վոր այդ շարժմանն ուշադրություն նվիրեն վոչ միայն կոմյերիտական կազմակերպությունները, այլ և կուսակցական բջիջները:

Հնգամյակի յերրորդ տարվա ծրագրի համար մղվող պայքարը սուր կերպով դնում ե կանանց մեջ աշխատանք տանելու հարցը: Մի շարք կուսկազմակերպություններ թերագնահատում են այս հարցը: Կանանցից նոր կադրեր ստեղծելն Անդրկովկասի արդյունաբերության համար և գյուղատնտեսության այնպիսի ճյուղերի համար, ինչպիսիք են՝ բամբակագործությունը, թեյագործությունը, շերամապահությունը, ծխախոտագործությունը—մեծ նշանակություն ունեն արդյունաբերության մեջ նոր բանվորներ ներգրավելու, տեխնիկական մշակույթների տարածությունները մեծացնելու և կոլխոզային շարժումը բարձրացնելու համար: ԿԱՆԱՆՑ



ԿԱԴՐԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՍՈՑՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱՑԱՌԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿԵՆՑԱՂՆ ԱՐՄԱՏԱՊԵՍ ՎԵՐԱԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Ուստի, կանանց կադրեր նախապատրաստելու և կանանց աշխատանքը ժողովրդական տնտեսության մեջ ռացիոնալ ձևով ոգտագործելու հարցերն իրենց տեղն են բռնելու բոլոր կուսկազմակերպությունների աշխատանքներում.

Անհրաժեշտ ե ծավալել կանանց մեջ լայն աշխատանք և ապահովել կանանց առաջավոր ակտիվի ներգրավումը կուսակցության և կոմյերիտմիության մեջ, մանավանդ Անդրկովկասի տեղական ազգությունների գծով:

Վերընտրական կամպանիայի ընթացքում ԱՐՏԱԴՐԱԿԱՆ և ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐԸ պետք ե ստուգեն, թե առանձին կոմմունիստները և բջիջներն իրենց վարքով ինչպիսի որինակ են ծառայում արտադրության մեջ, ինչպես են աջակցություն ցույց տալիս մասսաների մոբիլիզացիային արտադրական առաջադրությունները կատարելու համար, ինչպես են գլխավորում սոցիալիստական մրցակցության, հարվածայնության և արտադրության վերակառուցման ու ռացիոնալացման համար մղվող պայքարը:

Ստորին կուսմարմինների վերընտրությունների շուրջը տրանսպորտում անհրաժեշտ ե ծավալել Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի յերկաթուղային տրանսպորտի վերաբերյալ ընդունած դիմումի մշակման աշխատանքը:

Կուսմարմինների առաջիկա վերընտրությունների նշանակությունը պետք ե լայն լուսաբանություն ստանա անկուսակցական բանվորների առաջ, արտադրական և տրանսպորտային բջիջների կողմից:

Վերընտրական կամպանիան ԳՅՈՒՂՈՒՄ պետք ե սերտ կերպով կապված լինի 1931 թվի խնդիրների հետ: ՑԱՆՔԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ, ՆՈՐ ՀՈՍԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴԵՊԻ ԿՈԼԽՈԶՆԵՐԸ, ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՈՒՄ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԻՋԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ, ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ (ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ) ԴԵՄ ՀԵՏԱԳԱ ՀԱՐՁԱԿՈՒՄ ԳՈՐԾԵԼԸ — ԴԱՌՆԱԼՈՒ ՅԵ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ:

Կոլխոզները ցանքային կամպանիայի ժամանակին նախապատրաստելը, սոցմրցակցության և հարվածայնության մեթոդների գործադր-

րությունը ցույց կտան կոլեկտիվ տնտեսության առավելությունը և հզոր լծակ կհանդիսանան կոլեկտիվացման հետագա աճի համար:

Գոյություն ունեցող կոլխոզների ամրացումը և կոլեկտիվացման նոր վերելքի կազմակերպումը պահանջում է ուժեղացնել հարձակումը կուլակության դեմ, որի վերաբերմամբ Անդրկովկասում շարունակում է մնալ կուսակցության նախկին լոզունգը, որն այժմ այլևս հիմնական լոզունգ չէ, այլ օժանդակ — կուլակության սահմանափակումը, որը պետք է նախապատրաստի կուլակության, իբրև դասակարգի, վերացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա: Աշխատանքի պրակտիկան վկայում է այն մասին, որ մի շարք կուս. կազմակերպություններ գյուղում աշխատանքի տնտեսական և քաղաքական հարցերը լուծելիս անընդունակ են գտնվել գործով պայքարելու կուլակի դեմ: Մի շարք տեղերում իրենց ուզածի պես են վարում կուլակային տնտեսությունը, որի հետևանքով կուլակին աչքաթող են անում: Միևնույն ժամանակ թուլացվում է չքավորության մեջ տարվող աշխատանքը, արհամարհվում է չքավորության ուժերի կազմակերպումը և միջակի հետ յեղած միության ամրացումը: Անհրաժեշտ է վճռական կերպով արմատախիլ անել այդ աջ-ոպորտունիստական պրակտիկան:

Ստորին կուս. մարմինների վերընտրությունների ընթացքում գյուղում պետք է ստուգել ամեն մի կոմմունիստի՝ կոլխոզային շարժմանը ցույց տված մասնակցության չափը, նրանց մարտական պատրաստությունը բոլշևիկյան յերկրորդ գարնանը: ՀԱՐԿԱՎՈՐ Է ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԳԱՐՆԱՆՆ ԱՅՆՊԵՍ, ՎՈՐՊԵՍԶԻ ԸՆԴԱՐՁԱԿՎԵՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԴԱՇՏԵՐԸ, ՄԵԾԱՆԱ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎԵՆ ՉՔԱՎՈՐ-ՄԻՋԱԿ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Գյուղական բջիջները կոլխոզային և չքավոր-միջակ մասսաների առաջ պետք է լուսաբանեն Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի դիմումը կոնտրակտացիայի մասին:

Բուհերի բջիջների հաշվետու-վերընտրական կամպանիայի կենտրոնում պետք է դրված լինի բանվոր դասակարգից դուրս յեկած նոր մասնագետների կադրերի համար մղվող սիստեմատիկ պայքարի ուժեղացման խնդիրը: ՎՈՐԱԿՅԱԼ ԿԱԴՐԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԻ ԲՈՒՀԵՐԻ ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՃՌԱԿԱՆ ՕՂԱԿԸ:



Գիտական-հետազոտական հաստատությունների բջիջներում անհրաժեշտ է ստուգել գիտական աշխատավորների ակտիվությունը տեխնիկական ֆրոնտում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ - ԿՈՈՊԵՐԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԲՋԻՋՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԵՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎԵԼՈՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄՆ ԱՊԱՐԱՏԻ ՄԵՋ, ՎՃՌԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՄՂԵԼՈՎ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄԻ ԴԵՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԱՅԻՆ ԱՊԱՐԱՏՈՒՄ, ՊԱՇՏՊԱՆԵԼՈՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՐԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆԴԵՊ, վերակազմելով ապարատը սոցիալիստական շինարարության և աշխատավորների կուլտ-կենցաղային կարիքների պահանջների համեմատ:

—

1931 ԹՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՄԱՐՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՎՈՐՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ: ՆԱ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՄԱՐՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ, ՎՈՐՆ ԱՄՐԱՑՆՈՒՄ Է ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶԱՆ, ՀԱՍՏԱՏ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ: ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՅՍ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱԽՄԲՎԵՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԵՐԸ:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԱՎԱԼՈՒՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԳԾԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ ՅԵՎ ԱՌԱՋ ՏԱՆԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ, ՉՔԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԻՋԱԿՆԵՐԻ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ:

Համկոմկուսի Անդրկովկասյան Յերկրային Կոմիտե

ՀՀ Ազգային գրադարան
NL0188944

# ՎԱՐԻ ԿՈՒՍՕՐԳԱՆՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Փետրվարի 15-ից մինչև ապրիլի 1-ն անցկացնել Անդրկովկասի բոլոր ստորին կուսմարմինների (ցեխեր, խմբակներ, բջիջների և կուսկոլեկտիվների բյուրոներ, կայարանային և գործարանային կոմիտեներ) վերընտրությունները:

2. Ազգային կոմկուսների կենտկոմները, մարզկոմները և ռայկոմները ապահովելու յեն բոլոր բջիջներում Համկոմկուսի Անդրյերկկոմի կուսակցական ստորին մարմինների վերընտրությունների վերաբերյալ ընդունած նամակի մշակումը:

3. Հաշվի առնելով վերընտրությունների նախկին փորձը, Յերկրային Կոմիտեն հանձնարարում է ստեղծել հատուկ հանձնաժողովներ բյուրոների և բջիջների աշխատանքը ստուգելու համար, վորպեսզի ներգրավելով կուսակցական մասսային (բրիգադների նշանակում առանձին ձյուղերում), անցկացնել այդ աշխատանքն իբրև մեծ մասսայական ստուգում:

4. Պարտավորեցնել կենտկոմներին, մարզկոմներին և ռայկոմներին ապահովել վերընտրությունների ամբողջ ընթացքում բջիջներին ցույց տրվող ղեկավարությունը և ոգնությունը, ուղարկելով տեղերը կենտկոմների ու մարզկոմների անդամներին և պատասխանատու հրահանգիչներին:

5. Անհրաժեշտ համարել Յերկրային Կոմիտեյի բյուրոյի անդամներին և պատասխանատու հրահանգիչներին գյուղական ու արտադրական բջիջները ուղարկել՝ վերընտրություններին մասնակցելու համար:

6. Ապահովել վերընտրությունների ընթացքի լուսաբանությունը յերկրային, հանրապետական, ռայոնական, գործարանային և պատի մամուլում:

7. Անդրյերկկոմի կազմակերպչական բաժինը կազմակերպելու յե վերընտրությունների ընթացքի հետազոտությունը և ստուգումը:

---